ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (***Պ-216-03.07.2019-ՊԻ-011/0***), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (***Պ-216[1]-03.07.2019-ՊԻ-011/0***) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

No.	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Վարչական ակտը չի կարող բողոքարկվել վարչական կարգով, եթե նույն վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, իսկ եթե վարչական ակտի դեմ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ դատական կարգով վարչական ակտի վիճարկումից առաջ, այդ դեպքում վարչական մարմնի հարուցած վարույթը ենթակա է կարճման: »:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 2-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.. «Սույն մասով սահմանված կարգով վարչական ակտի դեմ ներկայացված բողոքը քննվում է դրա ստացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում:»	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 3-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «գանգատարկվել» բառը փոխարինել «բողոքարկվել» բառով: Նույն մասում «գանգատն» բառը փոխարինել «բողոքը» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն, պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. « Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետյալ բովանդակությամբ 7-րդ կետով. «7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքում վարչական ակտը չի բողոքարկվել վերադասության կարգով: »:	Ընդունվել է	Ընդունվել է